ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հունիսի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-318-15.05.2018-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 721 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-318-15.05.2018-ՊԱ-011/0*)ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է լրացում կատարել «Ոստիկանության մասին» օրենքի 22-րդ հոդվածում՝ սահմանելով, որ ոստիկանության ծառայողի կողմից շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ չեն կարող օգտագործվել ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառում: Ըստ նախագծի հեղինակների՝ ճանապարհային ոստիկանության ծառայողները ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելիս չեն ապահովում «Ոստիկանության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներով ոչ գաղտնի վերահսկողության մասին ոստիկանության ծառայողի կողմից բանավոր նախազգուշացնելու սահմանված պահանջը և «փաստորեն խախտման փաստի արձանագրումը տեղի է ունենում առանց սուբյեկտի համաձայնության», ինչը չի բխում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներից:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով ներկայացված օրենքի նախագծի և դրա ընդունման հիմնավորման վերաբերյալ ստորև ներկայացված հանգամանքները՝

1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածը, որպես անձնական տվյալների մշակման իրավաչափության առաջնահերթ պայման, սահմանում է անձնական տվյալների մշակման՝ օրենքով նախատեսված լինելը, ինչը «Ոստիկանության մասին» օրենքի 22-րդ հոդվածի գործող խմբագրությամբ ամբողջությամբ ապահովված է: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 78-րդ և «Անձնական տվյալների

պաշտպանության մասին» օրենքի 5-րդ հոդվածներով սահմանված համաչափության սկզբունքին, ապա ոստիկանության կողմից հասարակական կարգը պահպանելիս, այդ թվում՝ ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելիս, իրականացվող տեսաձայնագրման և լուսանկարահանման եղանակով տվյալների մշակումը հետապնդում է օրինական նպատակ, իսկ դրան հասնելու միջոցները պիտանի են, անհրաժեշտ և չափավոր:

2. Առաջարկվող կարգավորմամբ ստացվում է, որ ճանապարհային ոստիկանության ծառայողը հերթապահություն իրականացնելու ընթացքում, օրինակ, տրանսպորտային միջոցի մեջ տեղադրված տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցով ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառի իրավախախտում հայտնաբերելիս օրենքի ուժով զրկված է լինելու խախտումն արձանագրելու հնարավորությունից: Քննարկվող դեպքում տրանսպորտային միջոցի շարժման մեջ գտնվելու ընթացքում կատարված իրավախախտումների պարագայում բանավոր նախազգուշացնելու պահանջը կատարելն օբյեկտիվերեն հնարավոր չէ: Բացի դրանից, հնարավոր են անգամ այնպիսի իրավիճակներ, երբ ենթադրյալ իրավախախտը չենթարկվի ոստիկանության ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու հրահանգին՝ դրանով իսկ անհնար դարձնելով ոստիկանության ծառայողի կողմից շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ օգտագործելու և ենթադրյալ իրավախախտման արձանագրման վերաբերյալ անձին տեղեկացնելը: Մեր կարծիքով, ընդունելի չէ նաև նախագծի հիմնավորման մեջ նշված այն տեսակետը, որ գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում «խախտման փաստի արձանագրումը տեղի է ունենում առանց սուբյեկտի համաձայնության»: Ստացվում է, որ իրավախախտում արձանագրելուց և համապատասխան վարույթ հարուցելուց առաջ անհրաժեշտ է ստանալ իրավախախտում կատարելու մեջ կասկածվող անձի համաձայնությունը, ինչը չի բխում օրենքի տրամաբանությունից: Միևնույն ժամանակ, նախագծով որդեգրված տրամաբանությամբ ստացվում է, որ թեև առկա է

առերևույթ իրավախախտում, այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտման վարույթ հարուցելու առիթ, իրավասու մարմինը (պաշտոնատար անձը) իրավասու չէ կատարելու օրենքով իրեն վերապահված գործառույթը՝ ենթադրյալ իրավախախտի համաձայնության բացակայության պատճառով:

3. «Ոստիկանության մասին» օրենքի 22-րդ հոդվածի տասնչորսերորդ պարբերությունով նախատեսված բանավոր նախազգուշացման պահանջը գործնականում ամբողջությամբ իրագործելի է: Այսպես, նշված հոդվածի կիրառումն ապահովելու նպատակով ոստիկանությունում մշակվել և ներկայումս շրջանառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1769-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N 151-Ն որոշումներում լրացումներ կատարելու մասին նախագծեր, որոնց համաձայն գունագրաֆիկ երանգավորում ունեցող պարեկային ավտոմոբիլների վրա՝ տեսանելի վայրում, փակցվելու են իրականացվող տեսանկարահանման մասին նախազգուշացնող տարբերանշաններ (դրանց ձևը սահմանվելու է ոստիկանության պետի հրամանով): Գունագրաֆիկ երանգավորում չունեցող ավտոմոբիլով ծառայությունն իրականացվելու է բացառապես այն ճանապարհներին, որտեղ տեղակայված են նախազգուշացնող ցուցանակներ:

Ծառայողների համազգեստին ամրացված տեսախցիկներն ինքնին տեսանելի են անզեն աչքով: Բացի դրանից ծառայողները խստիվ հրահանգվել են դրանցով նկարահանումներ իրականացնելիս պարտադիր նախազգուշացնել տվյալների սուբյեկտներին: Այլ կերպ ասած, շարժական տեսանկարահանող և լուսանկարահանող սարքեր կիրառելիս օրենքով նախատեսված նախազգուշացման պահանջը կատարվելու է ամբողջ ծավալով:

4. Գտնում ենք, որ նման դեպքերում առանցքային նշանակություն պետք է ունենա այն հանգամանքը, որ ենթադրյալ իրավախախտի համար վարչական վարույթի շրջանակներում ապահովվում է լսված լինելու իրավունքի իրացման հնարավորությունը, այդ թվում՝ իր պահանջով տեսագրությունը կամ լուսանկարն ստանալու և վարչական վարույթի շրջանակներում իր՝ այլ իրավունքներն իրացնելու միջոցով:

Այդուհանդերձ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր պատրաստակամությունն է հայտնում համագործակցելու օրենսդրական նախաձեռնության հեղինակների հետ՝ հիմնավորման մեջ նշված խնդրի բավարար կարգավորման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2018 թվականի N 721 - Ա

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Հովհաննես Քոչարյանին նշանակել Ազգային ժողովում «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-318-15.05.2018-ՊԱ-011/0) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հունիսի 11
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-318-15.05.2018-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 22-դ հոդվածի 14-րդ պարբերությունում «հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս» բառերից հետո լրացնել «(բացառությամբ ճանապարհային երթեւեկության անվտանգության)» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրները, ընդունման անհրաժեշտությունը

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 14-րդ պարբերությունը սահմանում է, որ Հանցագործությունները կանխելիս կամ բացահայտելիս, հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ ոստիկանության տվյալ լիազորությունների իրականացմամբ սահմանափակվող ժամկետում: Տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցն ամրացվում է ոստիկանության ծառայողի համազգեստին կամ գտնվում է ոստիկանության ծառայողի ձեռքում կամ ոստիկանության ծառայողական տրանսպորտային միջոցում: Ոստիկանության ծառայողները պետք է տեսաձայնագրող եւ լուսանկարահանող տեխնիկական միջոցները կրեն տեսանելի ձեւով, բացառությամբ գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքերի: Սույն մասով նախատեսված տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներով ոչ գաղտնի վերահսկողության մասին ոստիկանության ծառայողը պարտավոր է բանավոր նախազգուշացնել: Մինչդեռ ճանապարհային ոստիկանության ծառայողները ճանապարհային անվտանգությունն ապահովելիս շարժական տեխնիկական միջոցներով տեսա կամ լուսանկարահանում իրականացնելիս չեն ապահովում ծանուցումը եւ փաստորեն խախտման փաստի արձանագրումը տեղի է ունենում առանց սուբյկետի համաձայնության: Մինչդեռ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ անձնական տվյալները մշակելու հիման վրա տվյալների սուբյեկտի համար իրավական հետեւանքներ առաջացնող կամ այլ կերպ նրա իրավունքներին ու օրինական շահերին առնչվող որոշումներն ընդունվում են տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում:

Առաջարկվող լուծումը

Առաջարկվում է ընդունել «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է բացառել շարժական տեխնիկական միջոցների կիրառումը ճանապարհային երթեւեկության անվտանգությունն ապահովելիս:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում կբացառվի շարժական տեխնիկական միջոցներով տեսանկարահանումը եւ լուսանկարահանումը ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից եւ կապահովվի անձնական տվյալների պաշտպանությունը: